ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> սեպտեմբերի 2012թ. N 391

ք. Արմավիր

<<ԱՐՄԱՎԻՐԻ N6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի <<դ>> ենթակետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի1-ին կետով, վեցերորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի օգոստոսի 15-ի 01/15/4271-12 հանձնարարականը

որոշում եմ՝

1. <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել <<Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2003 թվականի հունվարի 9-ի <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին>> N02 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> բառերը փոխարինել <<Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց>> բառերով:

4. <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին (Հ. Գասպարյան)՝ նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արմավիրի տարածքային բաժին՝ պետական գրանցում ստանալու համար:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ